

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի  
2014թ-ի փետրվարի 18-ի նիստի

### Օրակարգ

1. Քննաշրջանի արդյունքների ամփոփում /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Սոց. հարցումների արդյունքների ներկայացում /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
3. Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատում /զեկ.՝ Խ. Գալստյան/:
4. Ուսումնամեթոդական աշխատությունների հրատարակության երաշխավորություն /զեկ.՝ Խ. Գալստյան/:
5. Պրոֆեսորի կոչման համար ընտրության անցկացում:
6. Ընթացիկ հարցեր. ա/ դոցենտ Ա. Ալեքսանյանի ԲՈՀ-ի կողմից ղեկավարման թույլտվության հարցը, բ/ մագիստրանտ Մհեր Հակոբյանի հոդվածի տպագրության երաշխավորության հարցը:

### Խորհուրդը որոշեց

1. Հաստատել դոցենտ Ալեն Ղևոնդյանի դոկտորական ատենախոսության հետևյալ թեման՝ «Դաշինքային քաղաքականությունը պետության ազգային անվտանգության ապահովման գործընթացում» ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ:

2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.

ա/ Նարեկ Մինասյան - «Փափուկ ուժի քաղաքականության տեսամեթոդական հիմքերն ու հայեցակարգերը» ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր Արթուր Աթանեսյանին:

բ/ Արցախի պետական համալսարանի ասպիրանտ Դավիթ Ղարաբեկյան- «Արցախյան ազատագրական պայքարի գաղափարաբանությունը» ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հենգել Մանուչարյանին:

գ/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ 1-ին կուրսի ասպիրանտ Զվարթ Հովսեփյան- «Թուրքական սփյուռքի գործունը Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ 1990-

2011թթ. (Եվրոպայի և ԱՄՆ-ի օրինակով)» ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտացմամբ: Գիտական ղեկավար հաստատել պ. գ. դոկտոր Արսեն Ավագյանին:

3. Հրատարակության երաշխավորել.

ա/ Լ. Վարդանյանի «Քաղաքական տեսություն» դասընթացի ծրագիրը.

բ/ Մենուա Սողոմոնյանի «Միջազգային հարաբերությունների տեսություններ և վերլուծության մակարդակներ» դասախոսությունների նյութերը,

գ/ Լևոն Հովսեփյանի «Թուրքիայի պաշտպանության և անվտանգության ոլորտների արդիականացումն ու բարեփոխումները» աշխատությունը:

4. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել պրոֆեսորի կոչման համար Աշոտ Ենգոյանի անունը:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն:

գ/ Հաստատել Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն ու հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 21 անդամներից քվեարկությանը մասնակցել են 19-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Ենգոյան Աշոտ – 19 կողմ,

դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

5. Դիմել ՀՀ ԲՈՀ-ին՝ դոցենտ Ա. Ալեքսանյանին Է. Քալանթարյանի թեկնածուական ատենախոսության ղեկավար հաստատելու համար:

6. ԵՊՀ ՈԻԳԸ ժողովածուում տպագրության երաշխավորել Մհեր Հակոբյանի «Հայկական լոբբին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության համատեքստում» հոդվածը:

**Խորհրդի նախագահ, պրոֆ.  
Խորհրդի քարտուղար, դոց.**

**Գ. Պետրոսյան  
Խ. Գալստյան**